

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Սեպտեմբեր 2024 | N° 2

Արդյո՞ք թուրքական պարենամթերքը «կողողի» հայկական շուկան սահմանի բացման դեպքում. անհարկի երկյո՞ղ, թե՞ իրատեսականություն

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը որակական նոր փուլ մտավ 44-օրյա պատերազմից հետո: 2021 թ. Հայաստանը և Թուրքիան երկխոսության գործընթացում նշանակեցին հատուկ ներկայացուցիչներ, համապատասխանաբար, [Ռուբեն Ռուբինյանին](#) և [Սերդար Զրրչին](#), ովքեր արդեն 2022 թ. հուլիսի 1-ին Վիեննայում [պայմանավորվածություն](#) ձեռք բերեցին հնարավոր սեղմ ժամկետներում ապահովելու Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարավորություն Հայաստան և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար, ինչը պետք է դառնար հայ-թուրքական սահմանի բացման առաջին քայլը: Թեև անցել է ավելի քան երկու տարի, պայմանավորվածությունը դեռ կյանքի չի կոչվել: Այդուհանդերձ, կասկած չկա, որ մի օր հայ-թուրքական սահմանը բացվելու է, և երկկողմ առևտուրը, որն այսօր էլ միջնորդավորված կերպով կա (հիմնականում ներմուծում է Հայաստանը Վրաստանի տարածքով), ավելի է դյուրինանալու: Հայ-թուրքական սահմանի բացումը և թուրքական հնարավոր տնտեսական էքսպանսիան երկյուղ է առաջացնում Հայաստանում, մասնավոր, երբ խոսքը գնում է Հայաստանի շուկայում թուրքական պարենային ապրանքների գերմրցունակության մասին: Սույն քաղաքականության համառոտագրի նպատակն է [գնահատել թուրքական պարենային ապրանքների մրցունակությունը Հայաստանում, եթե բացվի հայ-թուրքական սահմանը, և ուղենշել, թե ինչպես Հայաստանը պետք է դիմագրավի հնարավոր ռիսկերը](#):




Հայ-թուրքական առևտուրը երեկ և այսօր

Թեև Թուրքիան առաջին պետություններից էր, որ 1991 թ. ճանաչեց Հայաստանի անկախությունը, այդուհանդերձ հայ-թուրքական ցամաքային սահմանը ԽՍՀՄ փլուզումից ի վեր պաշտոնապես փակ է եղել՝ չհաշված հումանիտար նպատակով բացումը եզակի դեպքերում (օրինակ՝ 1993 թ., 2023 թ.): Չնայած սահմանի փակ լինելուն՝ անկախության առաջին տարիներին բավականին ինտենսիվ սահմանային մաքսանենգ առևտուր կար ռուս սահմանապահների թողտվությամբ, որը շուտով վերացվեց, և ցամաքային ճանապարհով առևտրի միակ տարբերակը մնաց Վրաստանի տարածքով իրականացվող տարանցիկ բեռնափոխադրումը (առևտուրը): Վերջին 30 տարիներին ժամանակ առ ժամանակ Հայաստանի և

Թուրքիայի միջև կատարվել են նաև պարբերական օդային չվերթներ, որոնք որոշակիորեն սպասարկել են նաև առևտրային հոսքերը: Հայաստանի ապրանքային ներմուծման կառուցվածքում Թուրքիան հարաբերականորեն նշանակալի դերակատարում ունեցել է 2008-2011 թթ., երբ վերջինիս մասնաբաժինը Հայաստանի ներմուծման կառուցվածքում գերազանցել է 6%-ը (2008): Թեպետ 2023 թ. գրանցվել է թուրքական ծագման արտադրանքի ամենամեծ ծավալով ներմուծումը՝ շուրջ 337 միլիոն ԱՄՆ դոլար, սակայն Թուրքիայի մասնաբաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում շարունակել է նվազել՝ 2023-2024 թթ. կազմելով միջինում 2%:

Հայաստանի ապրանքային ներմուծման կառուցվածքում Թուրքիան հարաբերականորեն նշանակալի դերակատարում ունեցել է 2008-2011 թթ., երբ վերջինիս մասնաբաժինը մեր երկրի ներմուծման կառուցվածքում գերազանցել է 6%-ը (2008):

Գծապատկեր 1. Հայաստանի ապրանքային ներմուծումը Թուրքիայից, և Թուրքիայի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման կառուցվածքում, 1995-2024 թթ.




Աղբյուր՝ Armstat, Արտաքին առևտրի տվյալների բազա

Ավանդաբար Թուրքիայից Հայաստան ներմուծված ապրանքախմբերում ամենախոշոր կշիռն ունեցել են կենցաղային և արդյունաբերական ապրանքները, այդ թվում՝ պլաստիկե, փայտե իրեր, հագուստ և գործվածք, նավթաքիմիական նյութեր, մետաղներ և այլն: Այդպիսի պատկեր է նաև այժմ. 2020-23թթ. միջին

տվյալների համաձայն՝ ներմուծման 14%-ը կազմել են շոգեկաթսաները և համանման այլ սարքավորումներ, 16%-ը՝ զանազան տրիկոտաժե կամ ոչ տրիկոտաժե հագուստն ու գործվածքներն են, 13%-ն՝ ապահովել են պլաստիկե, ալյումինե, փայտե իրերը և այլն:

Գծապատկեր 2. Հայաստանի ապրանքային ներմուծման կառուցվածքը Թուրքիայից, 2020-2023 թթ. միջին տվյալներով



Ավանդաբար Թուրքիայից Հայաստան ներմուծված ապրանքախմբերում ամենախոշոր կշիռն ունեցել են կենցաղային և արդյունաբերական ապրանքները:

Աղբյուր՝ ՄԱԿ, UNcomtrade
Նշում՝ ըստ ԱՏԳ ԱԱ երկնիչ դասակարգման

Հայ-թուրքական առևտրի պոտենցիալը

Թուրքիայի հետ առևտրի պոտենցիալը գնահատելու համար մենք փորձել ենք հասկանալ, թե որքանով է վերջինիս արտահանման նկարագիրը համընկնում մեր երկրի ներմուծման նկարագրին, և հակառակը՝ որքանով կարող է Հայաս-

տանը դառնալ Թուրքիայի ներմուծման կարիքները սպասարկող երկիր: Այդ նպատակով հաշվարկվել է միջազգային արակտիկայում [լայնորեն կիրառվող](#) Առևտրի փոխլրացման ինդեքսը (**Trade Compatibility Index, TCI**) երկու երկրների առևտրի 2023 թ. տվյալներով՝ ինչպես սննդի և գյուղատնտեսական նշանակության ապրանքների (HS 01-25 գլուխներ), այնպես էլ ամբողջ ապրանքային առևտրի համար:

Աղյուսակ 1. Առևտրի փոխլրացման ինդեքսները հաշվարկված Հայաստան-Թուրքիա 2023 թ. առևտրի տվյալների հիման վրա

	Որքանով կարող է Հայաստանը բավարարել Թուրքիայի ներմուծման կարիքները	Որքանով կարող է Թուրքիան բավարարել Հայաստանի ներմուծման կարիքները
Պարեն և գյուղատնտեսական ապրանքներ (HS 01-25)	12.0	39.7
Բոլոր ապրանքախմբերը (HS 01-99)	23.5	39.5

Գյուղատնտեսական
ապրանքների գծով
Թուրքիայի
արտահանման և
Հայաստանի
ներմուծման
Նկարագրերում կա
որոշակի հա-
մընկնում, սակայն
այն ուժեղ չէ:

Առևտրի փոխլրացման ինդեքս

Առևտրի փոխլրացման ինդեքսը (Trade Compatibility Index, TCI) չափում է, թե որքանով է մի երկրի արտահանման կառուցվածքը համընկնում մյուս երկրի ներմուծման կառուցվածքի հետ: Այն լայնորեն կիրառվող գործիք է հատկապես տարածաշրջանային առևտրի հեռանկարների ուսումնասիրության մեջ: Ինդեքսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$TCI_{ij} = 100 * \left[1 - \sum_{k=1}^m |m_k^i - x_k^j| / 2 \right]$$

որտեղ,

m_k^i - ն k ապրանքի մասնաբաժինն է i երկրի ներմուծման մեջ

x_k^j - ն k ապրանքի մասնաբաժինն է j երկրի արտահանման մեջ:

Ինդեքսների հաշվարկման համար օգտագործվել են 2023 թվականին երկրների ապրանքային արտահանման և ներմուծման տվյալները UN Comtrade տվյալների բազայից՝ ըստ ԱՏԳ ԱԱ 6-նիշ դասակարգման: Առևտրի փոխլրացման ինդեքսը կարող է ունենալ 0-ից 100 միջակայքի արժեքներ, ընդ որում՝ որքան արժեքը մոտ է 100-ին, այնքան մեծ են տվյալ ուղղությամբ առևտրի զարգացման հնարավորությունները:

Աղյուսակ 1-ից կարող ենք նկատել, որ թեպետ պարենի և գյուղատնտեսական նշանակության ապրանքների թուրքական պահանջարկը բավարարելու համար Հայաստանը ունի չափազանց փոքր հնարավորություններ (TCI=12), այնուամենայնիվ, հակառակ ուղղությամբ ևս ցուցանիշը շատ մեծ չէ. պարենի և գյուղատնտեսական ապրանքների հայկական պահանջարկը բավարարելու համար Թուրքիայի արտահանման պոտենցիալը նկարագրող արժեքը (TCI=39.7) զգալի փոքր է բարձր համարվող սահմանային ցուցանիշից (50-ից): Այսինքն՝ գյուղատնտեսական ապրանքների գծով Թուրքիայի արտահանման և Հայաստանի ներմուծման նկարագրերում կա որոշակի համընկնում, սակայն այն ուժեղ չէ: Ընդ որում՝ նմանատիպ է իրավիճակը նաև ամբողջ ապրանքային առևտրի դեպքում:

Այս ամենով հանդերձ, հայ-թուրքական առևտրի ապագան այնքան էլ կանխատեսելի չէ: Չնայած ն՝ Հայաստանը, ն՝ Թուրքիան հանդիսանում են Առևտրի

համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ, սակայն դեռևս 2002 թ. Թուրքիան [հրաժարվել է](#) Հայաստանի հետ տնտեսական հարաբերություններում հետևել ԱՀԿ Մարաքեշի և Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրերի դրույթներին: Թուրքիայի այդ ծանուցումը ուժի մեջ է մինչև օրս, և չկան երաշխիքներ, որ սահմանի բացումը կուղեկցվի դրա հետևանքամբ, ինչն էլ նշանակում է, որ Թուրքիան չի խոստանում Հայաստանի նկատմամբ կիրառել այն սակագները (կամ ոչ պակաս բարենպաստ սակագներ), որոնք կիրառում է ԱՀԿ մյուս անդամների նկատմամբ: Այլ կերպ ասած՝ Հայաստանի դեպքում, այսպես կոչված, [«ազգերի առավել բարենպաստության»](#) (most-favoured-nation, MFN) ռեժիմը երաշխավորված չէ:

ԵԱՏՄ-Թուրքիա մաքսային կարգավորումներ

Չնայած 1996-ից Թուրքիան ունի [մաքսային միության](#) վերաբերյալ համաձայնագիր ԵՄ-ի հետ, նա ակտիվ առևտրային կապեր է հաստատել ԵԱՏՄ անդամ գրեթե բոլոր երկրների հետ՝ բացառությամբ Հայաստանի և մինչև վերջերս, ԵԱՏՄ որոշումներով համարվելով զարգացող երկիր, օգտվում էր արտոնյալ սակագներից, այդ թվում՝ ներմուծման նվազեցված կամ զրոյական

սակագներից: 2021 թ. ընդունված որոշումով ԵԱՏՄ-ն զարգացող երկրների արտոնյալ ցանկը [կրճատել է մոտ 3 անգամ](#). ցանկից հեռացվել է նաև Թուրքիան, որի հետ որպես երրորդ երկիր այժմ գործում են ԵԱՏՄ տարածք ներմուծման ընդհանուր սակագները: Դրանք պարենի և գյուղատնտեսական նշանակության ապրանքների համար հիմնականում **10-15%** միջակայքում են. համեմատաբար բարձր սակագներ են սահմանված մամթերքի և կաթնամթերքի նկատմամբ, իսկ համեմատաբար ցածր սակագներ՝ ձկնամթերքի, ցիտրուսային մրգերի, աղի և ալյուրի նկատմամբ:

Ընտրված պարենամթերքի գները Հայաստանում և Թուրքիայում. համեմատականներ

Հայ-թուրքական սահմանի բացումն ու ազատ առևտուրը հանգեցնելու է սպառողական մակարդակում պարզագույն երկընտրանքի, որտեղ տեղացի արտադրողը կարող է կամ պահել, կամ կորցնել իր սպառողին: Եթե կանխատեսումների հիմքում դնենք գների, ԵԱՏՄ-Թուրքիա մաքսային կարգավորումների, հարկային դրույքաչափերի, առևտրային մարժաների ներկա պայմանները և ենթադրությունը, որ սպառողը առաջնորդվելու է բացառապես գնային գործոնով, կտեսնենք, թե իրականության մեջ ինչ պատկեր է ունենալու այդ երկընտրանքը ընտրված ապրանքների գծով:



2021 թ. ընդունված որոշումով ԵԱՏՄ-ն զարգացող երկրների արտոնյալ ցանկից հեռացրել է նաև Թուրքիային, որի հետ որպես երրորդ երկիր այժմ գործում են ԵԱՏՄ տարածք ներմուծման ընդհանուր սակագները:

Հետազոտությունը կատարելու համար ընտրվել է 50 ապրանք, որոնց գծով դիտարկվել են միջին գները Երևանի և Թուրքիայի Կարս քաղաքի սուպերմարկետների կայքերում (2024 թ. մայիսի դրությամբ): Ընտրված ապրանքների ընդհանուր մասնաբաժինը կազմում է Հայաստանի սպառողական զամբյուղում առկա սննդամթերքի ավելի քան 60%-ը:

Թուրքական ապրանքների պոտենցիալ գինը Երևանում գնահատելու համար հաշվի են առնվել լիրա/դրամ միջին փոխարժեքը մայիսին, երրորդ երկրներից ԵԱՏՄ տարածք ներմուծման մաքսային սակագները, ԱԱՀ դրույքաչափերը Թուրքիայում (ընտրված ապրանքների գծով 1%) և Հայաստանում (20%): Հարկ է նշել, որ բաց սահմանի պարագայում տրանսպորտային ծախսերը Թուրքիայի կենտրոնական շրջաններից մինչև Կարս և մինչև Երևան ընդունվել են նույնը, հավասար են ընդունվել նաև միջնորդական մարժաները Հայաստանում և Թուրքիայում:

Աղյուսակ 2. Հայաստանում թուրքական արտադրանքի կանխատեսվող գինը ընտրված ապրանքների օրինակով

Ապրանքի անուն	Գինը Թուրքիայում, ՀՀ դրամ	Գինը Հայաստանում, ՀՀ դրամ	Թուրքական ապրանքի գինը ուղիղ ներմուծելու դեպքում (բացթողնման գին + մաքսատուրք + ամևտրային վերադիր + ԱԱՀ)	Տարբերությունը (D-C)/C*100
A	B	C	D	E
սոխ դեղին (կգ)	239	295	312	6%
լոլիկ (կգ)	358	795	490	-38%
վարունգ (կգ)	311	465	424	-9%
կարտոֆիլ (կգ)	275	215	359	67%
գազար (կգ)	658	285	875	207%
մաղադանոս, կապ (հտ)	114	180	149	-17%
կաղամբ (կգ)	143	235	192	-18%
ծաղկակաղամբ (կգ)	466	1,225	615	-50%
սմբուկ (կգ)	299	945	390	-59%
սխտոր (կգ)	1,914	1,890	2,501	32%
պղպեղ կանաչ (կգ)	418	2,150	547	-75%
հազար (հտ)	299	200	408	104%
բազուկ (կգ)	274	445	365	-18%
խնձոր (կգ)	418	585	532	-9%
տանձ (կգ)	717	1,450	895	-38%
նուռ (կգ)	1,076	2,690	1,343	-50%
եյակ (կգ)	1,076	2,390	1,343	-44%
մանդարին (կգ)	125	795	156	-80%
նարինջ (կգ)	239	695	298	-57%
ընկույզ (կգ)	1,627	4,950	2,029	-59%
տավարի միս (կգ)	6,341	3,490	8,664	148%
գառան կողամիս (կգ)	6,413	4,600	8,762	90%
հավ (կգ)	1,017	1,590	2,174	37%
ծուկ սառեցված (կգ)	2,656	1,690	3,251	92%
կաթ 1.5% (լիտր)	478	470	653	39%
թթվասեր (լիտր)	845	1,560	1,154	-26%
պանիր (կգ)	2,679	2,400	3,661	53%
կարագ (կգ)	4,521	4,650	6,177	33%
երշիկ (կգ)	7,766	3,850	9,374	143%
նրբերշիկ (կգ)	2,755	3,690	3,764	2%

բաստուրմա (կգ)	15,544	13,970	21,238	52%
վարունգի մարինադ (կգ)	396	1,130	527	-53%
պղպեղի պահածո (կգ)	616	1,150	820	-29%
սմբուկի պղպեղի խորոված պահածո (կգ)	1,110	1,750	1,451	-17%
սմբուկի խավիար (կգ)	575	1,630	765	-53%
աջիկա (կգ)	1,336	1,450	1,682	16%
հավի ձու (30 հտ)	987	2,100	1,349	-36%
տոմատի մածուկ (կգ)	992	1,090	1,308	20%
կետչուպ (կգ)	477	1,080	624	-42%
արևածաղկի սերմեր տուփով (կգ)	1,809	3,700	2,257	-39%
աղ (կգ)	100	150	124	-17%
ալյուր (կգ)	165	218	211	-3%
բալի մուրաբա (կգ)	1,023	3,040	1,337	-56%
խնձորի քացախ (լիտր)	311	860	410	-52%
ծիրակի ջեմ (կգ)	1,445	1,245	1,889	52%
շոկոլադե սալիկ (կգ)	5,654	5,900	6,835	16%
ձեթ (լիտր)	580	960	793	-17%
մակարոն տուփով (կգ)	358	475	480	1%
արիշտա տուփով (կգ)	785	1,090	1,053	-3%
ոսպ տուփով (կգ)	715	840	934	11%

Նշում՝ Տարբերության սյունում հաշվարկված արժեքը 0-ից մեծ լինելու դեպքում ենթադրում է, որ տեղական մթերքը ավելի մատչելի է, քան Թուրքիայից ներմուծվածը, իսկ 0-ից փոքր արժեքները ենթադրում են, որ Թուրքիայից ներմուծված ապրանքը ավելի էժան է, քան տեղականը

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, հետազոտվող **50 մթերքից 21-ի դեպքում** Հայաստան պոտենցիալ ներմուծվող թուրքական ապրանքներն ավելի թանկ են լինելու և պակաս մրցակցային՝ տեղական շուկայում ներկայացված հայկական կամ այլ երկրի արտադրանքների համեմատ: Այդպիսի ապրանքներից են հիմնականում մսեղենը, կաթնամթերքը, որոնց նկատմամբ ԵԱՏՄ կարգավորումներով սահմանված են բավականին բարձր ներմուծման սակագներ (հիմնականում 15%, հավի դեպքում՝ 80%), ինչպես նաև սոխը, սխտորը, կարտոֆիլը, գազարը և տեղական գյուղատնտեսությանը բնորոշ այլ մթերքներ:

Այլ է իրավիճակը մյուս **29** ապրանքների դեպքում. պտուղ-բանջարեղենի և բանջարեղենային պահածոների մեծ մասը, մրգեր (հատկապես ցիտրուսային, որոնց նկատմամբ ԵԱՏՄ-ն սահմանել է գրեթե նվազագույն 5% մաքսային դրույքաչափ), մուրաբաներ, ալյուր, աղ, քացախ, ձեթ և սպառողական զամբյուղում կարևորագույն կշիռ ունեցող այլ պարենամթերք, դրանցից 20 անուն ապրանքի դեպքում տեղականի գինը թուրքականին գերազանցում է մինչև 2 անգամ, իսկ 9-ի դեպքում՝ կրկնակից ավելի (կանաչ պղպեղը՝ 4, իսկ մանդարինը՝ 5 անգամ):

Միջազգային փորձ. ինչպես պաշտպանել ներքին շուկան

Ներքին շուկան պաշտպանելու ամենակարճ ճանապարհը, թերևս, խիստ առևտրային սահմանափակումների, ընդհուպ, էմբարգոյի կիրառելն է: Սակայն ինչպես հուշում է ֆրանսիացի տնտեսագետ Ֆրեդերիկ Բաստիայի

[առակը](#), «մոմագործների խնդրագրին» ընդառաջելով և արեգակնային լույսի դեմ պայքարելով մենք առևձազն չենք ընտրում տնտեսական զարգացման առողջ ճանապարհը:



Բաստիայի պամֆլետը մոմագործների (լուսավորության պարագաներ արտադրողների) մասին է, ովքեր դիմում են պատգամավորների պալատին խնդրելով ընդունել հրամանագիր, համաձայն որի պետք է փակ պահել լուսամուտները, երթիկները, անգամ անցքերը, որոնցից արևի լույսը ներս է ընկնում տուն՝ ապահովելով լուսավորություն, և այդպիսով բացասաբար անդրադառնում իրենց բիզնեսի վրա: Որպես հիմնավորում նրանք նշում են, որ դա անհավասար մրցակցություն է, և եթե պետությունը սահմանափակի արևի հասանելիությունը տներում, բնակչությունը ստիպված կլինի ավելի մեծ քանակությամբ լուսավորության պարագաներ ձեռք բերել՝ շղթայաբար խրախուսելով տեղական արտադրությունը, օրինակ, մոմի նկատմամբ պահանջարկի մեծացումը, կհանգեցնի ճարպի նկատմամբ պահանջարկի մեծացման, հետևաբար նաև անասնապահության զարգացման, որն էլ իր հերթին կապահովի բրդի և մսի հավելյալ արտադրություն:

Մոմագործներին ուղղված իր պատասխանում Բաստիան ուզում է ասել, որ տեղական արտադրողները կառավարությունից պահանջելով փակել «օտարերկրյա» արտադրողի մուտքը շուկա, նվազեցնում են հասարակության ընդհանուր բարեկեցությունը և հռետորական հարց է բարձրացնում. «Արդյո՞ք դուք գերադասում եք, որ մեր ժողովուրդն ունենա մատչելի արտադրանք սպառելու հնարավորություն, թե՛ կցանկանայիք բարդել նրա ուսերին ծանր աշխատանքի և թանկ արտադրության ելթադրյալ առավելությունները»:

Բացի դրանից, ԱՅԿ Գյուղատնտեսության մասին [համաձայնագիրը](#), որը ստորագրվել է նաև Հայաստանի կողմից, աստիճանաբար պարտավորեցնում է ոչ սակազևային գործիքները փոխարինել սակազևայիններով (սակազևայնացում), իսկ ներմուծման սակազևային կարգավորման հնարավորություններն էլ խիստ սահմանափակում՝ այդ կերպ փորձելով

ավելի կանխատեսելի դարձնել միջազգային առևտուրը: Նույն համաձայնագրի շրջանակում կարգավորվում են նաև գյուղատնտեսության ոլորտին աջակցության չափերը և տեսակները (բաժին 4, հոդված 6): Այդուհանդերձ, միջազգային փորձը ունի օրինակներ, թե ինչպես կարելի է պաշտպանել ներքին շուկան՝ միաժամանակ չմեկուսանալով և պահպանելով միջազգային «խաղի կանոնները»:

ԵՄ Գյուղատնտեսական ընդհանուր քաղաքականություն (CAP)

Եվրոպական հանձնաժողովի կողմից 1962 թ. մեկնարկած այս նախաձեռնությունը այժմ ծախսում է Եվրոպական միության բյուջեի մոտ **35%-ը**, իսկ գոյության առաջին տարիներին այդ ցուցանիշը **գերազանցում էր 70%-ը**: Այդ ահռելի միջոցները՝ այժմ տարեկան մոտ **55 մլրդ եվրո**, ծախսվում են այնպիսի գործիքների շրջանակում, որոնք տեղավորվում են ԱՀԿ-ի կողմից «առևտուրը չխեղաթյուրող» միջոցառում-

ների «կանաչ արկղում»: Այդպիսիք են, օրինակ, ներդրումները գյուղատնտեսական ենթակառուցվածքների ուղղությամբ, ինչպես նաև **ուղղակի վճարումները** ֆերմերներին, որոնք տրվում են անկախ արտադրության ծավալից: Վերջին հատկանիշը թույլ է տվել ուղղակի վճարումները, որոնք այլ դեպքում կարող էին համարվել առևտուրը խեղաթյուրող, համարել առևտուրը նվազագույնս խեղաթյուրող և ներառել «կանաչ արկղում», որի միջոցառումների գծով ներքին աջակցության ծավալները նվազեցնելու պարտավորվածություն չկա:

Միջազգային փորձը ունի օրինակներ, թե ինչպես կարելի է պաշտպանել ներքին շուկան՝ միաժամանակ չմեկուսանալով և պահպանելով միջազգային «խաղի կանոնները»:



ԱՀԿ օրենսդրությունը ներքին աջակցության ոլորտում աջակցության եղանակները տարբերակում է ըստ հիմնական երկու «արկղերի»՝ պայմանավորված արտադրության ու գների վրա ազդեցության չափով. «դեղին արկղում» արտադրության և առևտրի մակարդակի վրա ազդող (խեղաթյուրող) գործիքներն են, իսկ «կանաչում»՝ առևտուրը չխեղաթյուրող կամ նվազագույնս խեղաթյուրողները, որոնք չեն ազդում գների վրա և պայմանավորված չեն արտադրության ծավալով: «Դեղին արկղի» գործիքները պետք է աստիճանական նվազեցվեն, իսկ «կանաչները» ենթակա չեն կրճատման:

Ըստ ԱՀԿ-ին ներկայացված Հայաստանի Առևտրային քաղաքականության վերանայման **գեկույցի (2018)** Հայաստանում գյուղատնտեսության պետական աջակցության մեծ մասը պատկանում է «կանաչ արկղին», որտեղ պետական աջակցության ծավալը կազմում է համախառն արտադրանքի 1%-ը, իսկ մնացածը՝ «դեղին արկղին», որտեղ պետական աջակցության ծավալը համախառն արտադրանքի ընդամենը 0.5%-ն է: «Դեղին արկղում» աջակցության սահմանագիծը զարգացող երկրների համար 10%-ն է, չնայած որոշակի դեպքերում, ինչպես Հայաստանի նկատմամբ, կարող է կիրառվել ավելի ցածր 5% ցուցանիշ (ԱՀԿ-ում երկրի զարգացող լինելը որոշվում է ոչ թե ՄԱԿ-ի մեթոդաբանությամբ, այլ առաջարկվում է տվյալ երկրի կողմից և ընդունվում, եթե մյուս երկրները դրա շուրջ առարկություններ չեն ներկայացնում):

Ճապոնիայում բրնձի շուկայի պաշտպանության փորձը



Ճապոնիան, բանակցելով ԱՀԿ-ի հետ, կարողացել է ապացուցել, որ բրնձի արտադրությունը խիստ զգայուն ոլորտ է երկրի տնտեսության համար, հետևաբար այն պաշտպանության կարիք ունի:

Այդ երկիրը բրնձի ներքին շուկան պաշտպանում է սակագնային քվոտաների միջոցով. **0%** ներմուծման դրույքաչափ մինչև 682,200 տոննա ներմուծման նկատմամբ, այնուհետև յուրաքանչյուր կիլոգրամի համար **341 հեն** (կամ մոտավորապես 358%): Սա թույլ է տալիս վերահսկել ներմուծվող բրնձի ծավալը և պաշտպանել տեղական արտադրողներին: Միաժամանակ, կառավարությունը տրամադրում է ֆինանսական աջակցություն ֆերմերներին՝ սահմանափակվելով «դեղին արկղի» համար սահմանված աջակցության սահմանագծում:

Չինաստանում ևս տեղական բրնձի, ցորենի և եգիպտացորենի շուկան պաշտպանվում է սակագնային քվոտաների միջոցով:

Մեղրի շուկայի պաշտպանությունը ԱՄՆ-ում



2000-ականների սկզբին Չինաստանից և Արգենտինայից ներկրվող մեղրն ԱՄՆ-ում վաճառվում էր իրական արժեքից ցածր գնով՝ նյութական վնաս պատճառելով ամերիկացի մեղրագործներին: Բացված հետաքննությունը հաստատեց նյութական վնասները և սահմանեց **33-61%** հակագնագցման (հակադեմփինգային) դրույքաչափեր արգենտինական և **26-184%**՝ չինական մեղրի նկատմամբ: Կարճ ժամանակ անց մեղրի ներքին գները ամերիկյան շուկայում կարգավորվեցին:

Սխտորի շուկայի պաշտպանությունը Հարավային Կորեայում



1999 թվականին հարավկորեական շուկայում Չինաստանից ներկրվող սխտորը զգալի վնասներ էր հասցնում տեղացի ֆերմերներին: Չնայած Չինաստանի և Կորեայի բուռն տնտեսական հարաբերություններին՝ բացվեց վեճ, որն ավարտվեց ներմուծվող սխտորի նկատմամբ պաշտպանական միջոց (safeguard measure) կիրառելով. սառեցված սխտորի նկատմամբ սահմանվեց 285% ներմուծման սակագին 200-օրյա ժամկետով:

Եզրակացություններ և առաջարկություններ

- ✓ Կիրառված մեթոդաբանությունը ցույց է տալիս, որ Հայաստանի պարենի և գյուղատնտեսական ապրանքների շուկան գրավելու Թուրքիայի հնարավորությունները սահմանափակ են:
- ✓ Այդուհանդերձ, հայ-թուրքական սահմանի բացման դեպքում դիտարկված 50 պարենային և գյուղատնտեսական ապրանքներից 29-ը գնով ավելի մրցունակ կլինեն Հայաստանում արտադրված ապրանքների նկատմամբ և, այլ հավասար պայմաններում, միջնաժամկետում կարող են շոշափելի խնդիրներ ստեղծել տեղական արտադրողների համար, սակայն վերջնական սպառողները կշահեն ցածր գներից:
- ✓ Հայաստանը թե՛ գործող միջազգային իրավահարաբերությունների դաշտում, թե՛ ներքին օրենսդրությամբ ունի բավարար լծակներ՝ իրականացնելու շուկայի արդյունավետ պաշտպանություն չարաշահումների դեպքում: Մասնավորապես.
 - ԵԱՏՄ պայմանագիրը հնարավորություն է տալիս սահմանել սեզոնային մաքսատուրքեր (տարեկան առավելագույնը 6 ամիս ժամկետով (հոդված 42, կետ 5)) կամ միակողմանի միջոցներ երրորդ երկրների նկատմամբ (հավելված 7, բաժին 10), ինչը թույլ է տալիս օպերատիվ, առանց երրորդ կողմի հավանության սպասելու գործարկել ներքին շուկայի պաշտպանության մեխանիզմներ,
 - «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքը հնարավորություն է տալիս լիազոր մարմնին սկսելու վարույթ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների կողմից չիմնավորված ցածր գին սահմանելու հատկանիշներով: Ընդ որում՝ գերիշխող դիրք ունեցող է համարվում նաև այն տնտեսավարողը, որը տվյալ ապրանքային շուկայում ունի շուկայական իշխանություն, մասնավորապես, որպես իրացնող կամ ձեռքբերող, չի հանդիպում էական մրցակցության և (կամ), իր ֆինանսական կարողությունից կամ այլ հատկանիշներից ելնելով, հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա և (կամ) դուրս մղելու այլ տնտեսավարող սուբյեկտին տվյալ ապրանքային շուկայից և (կամ) խոչընդոտելու տվյալ ապրանքային շուկա մուտք գործելուն:

Այսպիսով՝ հայ-թուրքական սահմանի բացման դեպքում դիտարկված պարենային և գյուղատնտեսական ապրանքներից 29-ի գծով շուկայում թուրքական արտադրողները կունենան գնային մրցունակություն, սակայն Հայաստանը ունի բավարար իրավական լծակներ իրավիճակը կառավարելի պահելու համար: Այդ լծակների արդյունավետ իրացման նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կարողությունները ներքին ապրանքային շուկաները մշտադիտարկելու համար:

Քաղաքական
համառոտագրում տեղ
գտած կարծիքների
համընկնումը Ֆրիդրիխ
Նաումանի «Հանուն
ազատության»
հիմնադրամի հետ
պարտադիր չէ: